«ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐ-ԾԱԽՍ-ԵԿԱՄՈՒՏ» ԿԱՊԸ. ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԱՄԱԼՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Հայաստանում սոցիալ-տնտեսական վիճակի, բնակչության կենսամակարդակի, սպառողական գների և բնակչության եկամուտների վերաբերյալ քննարկումները վերջին շրջանում բավականին ակտիվացել են, սակայն կարծիքները շատ հակասական են ու տարաբնույթ:

Մի կողմից որոշ տնտեսագետներ և վերլուծաբաններ մտահոգություն են հնչեցնում երկրում սպառողական, մասնավորապես առաջին անհրաժեշտության ապրանքների թանկացման ու բնակչության կենսամակարդակի նվազման վերաբերյալ, մյուս կողմից հնչում են պաշտոնական կարծիքներ, որ «Հայաստանում կա դրական դինամիկա: Որ բարձրացել է 85 հազար մարդու սոցիալական նպաստ ու թոշակ, 200 հազար մարդու աշխատավարձ, ավելի քան 200 հազար քաղաքացու հասանելի են դարձել առողջապահական ծառայությունները, արձանագրվել է հիպոթեքային վարկերի 100 տոկոս աճ և այլն»[1]: Որ «Հայաստանում շատ երկար ժամանակ մակրոտնտեսական կայուն վիճակ է, նաև հիմա, և դա որևէ կերպ չի սպառնում քաղաքացիների բարեկեցությանը»[2]: Եվ, ինչպես ասում է ՀՀ վարչապետը, «…այսօրվա վիճակագրությունն ու իրողությունները … ինքնին մենք դրական ենք համարում, բայց չենք համարում, որ հասել ենք մեր ցանկացած ցուցանիշին: Այստեղ կարևոր է դինամիկան, …և այդ դրական դինամիկան ունի շատ լուրջ բովանդակություն: …Հայաստանի Հանրապետության ավանդական տնտեսագիտական միտքը գործել է հաշվիչ մեքենայով, առանց փիլիսոփայության և առանց քաղաքական տեսլականի: Շատ դեպքերում մեր տնտեսագետների հետ իրավիճակների մեկնաբանության տարընթերցումները կապված են դրա հետ: Իմ խորը համոզմունքն է, և ես գնալով դրանում ավելի եմ համոզվում, որ թվերը ոչինչ են՝ առանց դրանց հիմքում գտնվող բովանդակության»[3]:

Փորձենք հասկանալ բովանդակությունը՝ ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացումների բազմակողմանի վերլուծության ճանապարհով:

---

[1] Վարչապետ Նիկոլ Փաշինյանի զեկույցը ԱԺ-ում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին, 27.03.2019 թ., www.primeminister.am/statements-and-messeges

[2] ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Տիգրան Խաչատրյանի 22.03.2019 թ. ԱԺ-ում լրագրողների հետ զրույցը:

[3] Վարչապետ Նիկոլ Փաշինյանի զեկույցը ԱԺ-ում:

Սպառողական գների և բնակչության եկամուտների արդի տեղաշարժերը ՀՀ-ում

Համաձայն ՀՀ ԿԲ պաշտոնական տվյալների[4]՝ 2018-ին 12-ամսյա բնականոն գնաճը տարեսկզբի 5.6 %-ից տարեվերջին նվազել է 2.6 %-ով, իսկ 12-ամսյա գնաճը, տատանվելով 2.5 % մակարդակի շուրջ, դեկտեմբերին կազմել է 1.8 %: Իրականում գնաճի նվազումը պայմանավորված է եղել ներքին պահանջարկի նվազումով և արտաքին հատվածից եկող գնաճային ազդեցություններով, մասնավորապես՝ համաշխարհային տնտեսության աճի տեմպերի որոշակի դանդաղման արդյունքում ձևավորված գնանկումով: Այս համատեքստում ուշագրավ է ՀՀ կենտրոնական բանկի հայտարարությունը. «2018 թվականին գնաճը կանխատեսվածից ավելի ցածր է, այնուհանդերձ ասել, որ տարին զերծ էր թանկացումներից, միանշանակ սխալ կլինի»[5]: Այստեղ կարևորը ոչ թե ցածր գնաճն է, այլ առաջին անհրաժեշտության ապրանքների իրական թանկացումների փաստը, ինչը շարունակվում է նաև այսօր: Դա պայմանավորված է ոչ միայն օբյեկտիվ, այլ նաև սուբյեկտիվ մի շարք հանգամանքներով, որոնցից առանձնակի ուշադրության է արժանի Հայաստանի ԵԱՏՄ միասնական մաքսային համակարգին ինտեգրվելու գործընթացում մոտ 800 ապրանքատեսակի մաքսատուրքերի աստիճանական բարձրացման վերաբերյալ որոշումը: Համաձայն դրա՝ 2019 թ. հունվարի 1-ից արդեն իսկ բարձրացել են երրորդ երկրներից ներմուծվող մի շարք ապրանքատեսակների մաքսատուրքերը: Վերջին շրջանում արդեն իսկ նկատելի են նշված որոշ ապրանքատեսակների թանկացումները՝ պատճառահետևանքային տարաբնույթ դրսևորումներով:

Առավել հիմնավոր լինելու համար այնուամենայնիվ անհրաժեշտ է շարունակել պաշտոնական վիճակագրության համալիր ուսումնասիրումը: Սպառողական գների ու սպառողական ծախսերի, նվազագույն սպառողական զամբյուղի և պարենային զամբյուղի, միջին ամսական աշխատավարձի ու բնակչության այլ եկամուտների վերաբերյալ տարբեր ժամանակային հորիզոնների վիճակագրական տվյալների համադրումը հնարավորություն է տալիս առավել հանգամանալից վեր հանելու դրանց տեղաշարժերի միտումները և բնակչության կենսամակարդակի փոփոխությունը:

Գնաճը և սպառողական գների ինդեքսը

Հայտնի բան է՝ ո՛չ չափից դուրս բարձր գնաճն է տնտեսության համար լավ, ո՛չ էլ չափից դուրս ցածրը կամ, առավել ևս՝ գնանկումը:

---

[4] Տե՛ս ՀՀ ԿԲ 2018 թ. տարեկան հաշվետվություն, էջ 28:

[5] ՀՀ ԿԲ 2018 թ. գնաճի հաշվետվություն, էջ 7:

Կենտրոնական բանկը, որի՝ Սահմանադրությամբ ամրագրված գլխավոր գործառույթներից մեկը գների կայունության ապահովումն է, մշտապես վարում է այնպիսի դրամավարկային քաղաքականություն, որ գնաճը պահպանվի *օրենքով սահմանված* (*3±1.5*) *%-ի միջակայքում,* այսինքն՝ առավելագույնը՝ 5.5 %, նվազագույնը՝ 2.5 %: Ու եթե, օրինակ, 2010-2012 թթ. ՀՀ ԿԲ-ն ջանում էր 7 %-ից բարձր գնաճը զսպել ու վերադարձնել թույլատրելի միջակայք, ապա վերջին շրջանում նույն բանը արվում է «ներքևից»՝ փորձելով դուրս գալ գնանկման ու ցածր գնաճի միջակայքից: Սկսած 2014 թ.-ից նկատվում է սպառողական գների անկում՝ 104.6 %-ից 2016 թվականին հասնելով 98.9 %-ի: Սպառողական գների որոշակի աճ է նկատվում 2017 թ., ինչը 2018 թ. նորից դրսևորում է նվազման միտում (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Սպառողական գների փոփոխությունը ըստ խոշոր ապրանքային խմբերի

(դեկտեմբերից դեկտեմբեր)

	2014	**2015**	**2016**	**2017**	**2018**
Սպառողական գների ինդեքս, ընդամենը, այդ թվում	**104.6**	**99.9**	**98.9**	**102.6**	**101.8**
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ (ներառյալ ալկոհոլային խմիչքներ, ծխախոտ), այդ թվում	106.3	96.3	99.8	105.3	101.8
-սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ	106.2	95.9	99.7	105.5	101.6
-ալկոհոլային խմիչք և ծխախոտ	107.1	99.9	101.1	104.0	103.9
Ոչ պարենային ապրանքներ	101.6	103.4	96.6	101.7	103.2
Ծառայություններ	103.0	103.2	99.3	99.5	100.8

Աղբյուրը՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, Իրական հատված, Գներ և սակագներ, 2018 թ., էջ 63:

Ինչպես երևում է աղյուսակից, չնայած սպառողական գների անկման ընդհանուր միտումներին, այնուամենայնիվ որոշ առաջին անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների գները շարունակում են աճել, ինչի մասին էլ արձանագրել էր ՀՀ ԿԲ-ն: Մասնավորապես, 2018 թ. Հայաստանում լուրջ թանկացում է արձանագրվել *սննդամթերք* ապրանքային խմբում: Օրինակ՝ ալյուրի գինը բարձրացել է շուրջ 10 տոկոսով, ինչի հետևանքով հացը 100 դրամից դարձել է 120 դրամ: Թանկացման նոր դրսևորումներ են նկատվել առողջապահության ու կրթության ծառայություններում և այլն: Սակայն եթե 2018 թ. դեպքում կարող ենք տարին ավարտված և խնդիրներն ինչ-որ կերպ հաղթահարված համարել, ապա 2019 թ. այս առումով ավելի մտահոգիչ է:

Ինչ է տեղի ունեցել 2019 թ. առաջին եռամսյակում:

Այս ժամանակահատվածում նույնպես շարունակվում է գնանկ-

ման միտումը[6]:

Հաշվի առնելով ժամանակահատվածի կարճությունը՝ սպառողական գների առավել իրական պատկերը ներկայացնելու համար նպատակահարմար է կենտրոնանալ տարբեր ժամանակային հորիզոնների վրա.

1. Սպառողական գների փոփոխությունները տարվա սկզբից հաշվարկված ժամանակահատվածում՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ (աճողական կարգով):

2. Սպառողական գների տոկոսային փոփոխությունները յուրաքանչյուր նախորդ ամսվա նկատմամբ:

3. Սպառողական գների յուրաքանչյուր ամսվա տոկոսային փոփոխությունը՝ նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ:

Նման մոտեցման դեպքում հնարավոր կլինի հասկանալ ընթացիկ վիճակը, սակայն խիստ կարճաժամկետության պատճառով այն չի արտացոլի գործոնային (օրինակ՝ սեզոնայնություն) ազդեցությունների կայուն միտումները: Երրորդ ժամանակային հորիզոնով դիտարկումները մեզ հնարավորություն կտան հասկանալու իրավիճակային զարգացումները՝ արտացոլելով սեզոնայնությունը և գործոնային ազդեցությունների հարաբերականորեն կայուն միտումները (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Սպառողական գների ինդեքսը ՀՀ-ում ըստ ապրանք-ծառայությունների խոշոր խմբերի, % (2019 թ. 1-ին եռամսյակ)

2.1.Տարվա սկզբը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ (աճողական կարգով) 2018 դեկտեմբերը=100 %			
Անվանումը	**2019 թ.**		
	հունվար	**փետրվար**	**մարտ**
1.Սպառման ապրանքներ, այդ թվում	102.6	103.6	103.7
-սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ, ալկոհոլային խմիչք և ծխախոտ	104.2	105.8	105.8
-ոչ պարենային ապրանքներ	99.4	99.0	66.6
2.Ծառայություններ	100.2	100.1	100.1

[6] Տե՛ս Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականի հունվար-մարտին, Վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ԱՎԾ, 2019, աղյուսակ 8, էջ 76-78:

2.2.Նախորդ ամսվա նկատմամբ տոկոսային փոփոխությունը			
Անվանումը	**2019 թ.**		
	հունվար	**փետրվար**	**մարտ**
1.Սպառման ապրանքներ, այդ թվում	2.6	0.9	0.2
-սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ, ալկոհոլային խմիչք և ծխախոտ	4.2	1.6	0.0
-ոչ պարենային ապրանքներ	-0.6	-0.4	0.6
2.Ծառայություններ	0.2	-0.1	0.0
2.3. Յուրաքանչյուր ամսվա տոկոսային փոփոխությունը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ			
Անվանումը	**2019 թ.**		
	հունվար	**փետրվար**	**մարտ**
1.Սպառման ապրանքներ, այդ թվում.	0.8	2.6	2.7
-սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ, ալկոհոլային խմիչք և ծխախոտ	0.8	3.5	3.5
-ոչ պարենային ապրանքներ	0.9	0.6	0.9
2.Ծառայություններ	0.6	0.4	0.1

Աղբյուրը՝ Վիճակագրական տեղեկագիր, Սպառողական գների ինդեքսը, աղյուսակ 7, էջ 75:

Ինչպես երևում է աղյուսակից, սպառողական գների, մասնավորապես սննդամթերքի կայուն և արտահայտված աճ է արձանագրվել և՛ 2.1, և՛ 2.3 ժամանակային հորիզոններում: Դանդաղ նվազման միտում է դրսևորվել ոչ պարենային ապրանքների և ծառայությունների գներում:

Նյութը չծանրաբեռնելու նպատակով, այստեղ անդրադարձ է կատարվում միայն սպառողական գների փոփոխությունների ոչ բարենպաստ միտումներին՝ ըստ կոնկրետ ապրանքատեսակների (տե՛ս աղյուսակ 3):

Ինչպես երևում է աղյուսակից, 2019 թ. առաջին երեք ամիսներին գրանցվել են կայուն աճի միտումներ հինգ ապրանքային խմբերի ավելի քան 18 ապրանքների և ծառայությունների գծով, ընդ որում՝ և՛ տարվա սկզբից հաշվարկված ժամանակահատվածի (նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ, աճողական կարգով), և՛ յուրաքանչյուր ամսվա՝ նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ ժամանակային հորիզոնների կտրվածքով: Այսինքն՝ այդ ապրանքների գների աճը տեղի է ունենում և՛ ընթացիկ զարգացումների, և՛ գործոնային (օրինակ՝ սեզոնայնության) ազդեցությունների պայմաններում: Ընդ որում, եթե սպառողական գների ինդեքսը դիտարկվող ժամանակահատվածում աճել է 0.8-ից մինչև 1.5 (աճողական կարգով) և 0.8-ից մինչև 1.9 (սեզոնայնությամբ պայմանավորված), ապա սննդամթերքի գների ինդեքսը՝ համապատասխանաբար 0.5-2.5 և 0.5-3.6, ասել է թե՝ սննդամթերքի գների աճը շատ ավելի մեծ է, քան սպառողական գների ագրեգացված աճը:

Աղյուսակ 3

Սպառողական գների ինդեքսը ՀՀ-ում (2019 թ.)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Տարվա սկիզբը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ (աճողական), %			Ցուրաքանչյուր ամիսը նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, %		
	Հունվ.	*Փետր.*	*Մարտ*	*Հունվ.*	*Փետր.*	*Մարտ*
Սպառողական գների ինդեքս, ընդամենը	0.8	1.3	1.5	0.8	1.9	1.9
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ	0.5	2.0	2.4	0.5	3.4	3.4
-Սննդամթերք	0.5	2.0	2.5	0.5	3.6	3.6
-Հացաբուլկեղեն և ձավարեղեն	1.3	1.9	2.5	1.3	2.5	3.8
-Հաց	2.3	3.0	3.7	2.3	3.7	5.0
-Միս	4.9	4.5	4.2	4.9	4.1	3.6
-Միս գառան, ոչխարի, այծի	11.8	10.7	9.8	11.8	9.6	8.0
-Թռչնամիս (հավ, հնդկահավ)	4.1	6.2	8.0	4.1	8.5	11.6
-Կարագ	2.8	2.7	2.1	2.8	2.7	0.5
-Մրգեր	7.2	9.3	7.2	7.2	11.3	3.3
-Կարտոֆիլ	5.6	8.0	9.2	5.6	10.3	11.7
-Մանկական սնունդ	1.4	1.8	1.9	1.4	2.1	2.2
Ալկոհոլային խմիչք, ծխախոտ	3.9	3.9	4.1	3.9	3.9	4.4
-Ալկոհոլային խմիչքներ	1.6	1.5	1.4	1.6	1.4	1.4
-Ծխախոտային արտադ.	7.9	8.1	8.6	7.9	8.2	9.7
Հագուստ, կոշիկ	2.6	2.5	2.7	2.6	2.5	3.1
Առողջապահություն	3.0	2.9	2.5	3.0	2.9	1.6
-ստոմատոլոգիական ծառ.	4.3	5.8	5.3	4.3	7.3	4.1
-բժշկական հետազոտ.	8.9	9.4	7.6	8.9	9.8	4.4
-հիվանդանոցային ծառ.	3.3	4.5	4.1	3.3	5.7	3.3
Կրթություն	1.3	1.3	1.3	1.3	1.3	1.2
-նախադպրոցական և տարրական	1.7	1.7	1.7	1.7	1.7	1.7
-միջնակարգ կրթություն	2.8	2.8	2.8	2.8	2.8	2.8
-բարձրագույն կրթություն	0.6	0.6	0.6	0.6	0.6	0.6

Աղբյուրը՝ Վիճակագրական տեղեկագիր, Սպառողական գների ինդեքսը, 2019 թ., աղ. 2, էջ 16-27

Իսկ այժմ ավելի հանգամանալից[7]: Մեկ տարվա կտրվածքով (2019 թ. մարտ 2018 թ. մարտ) սպառողական շուկայում արձանագրվել է 1.9 % գնաճ, այդ թվում՝ սննդամթերքինը՝ 3.5 %, ոչ պարենային ապրանքներինը՝ 0.9 %, ծառայությունների սակագներինը՝ 0.1 %, իսկ հունվար-մարտին 2018 թ. հունվար-մարտի համեմատ՝ համապատասխանաբար 1.5 %, 2.6 %, 0.8 % և 0.4 %: Ավելի կոնկրետ՝ 2019 թ. մարտին 2018 թ. մարտի համեմատ գնաճ է գրանցվել հետևյալ ապրանքախմբերում. *հացաբուլկեղեն և ձավարեղեն*՝3.8 % (ալյուրի և հացի գներն աճել են՝

[7] Վիճակագրական տեղեկագիր, Սպառողական գների ինդեքսը, 2019, էջ 77:

համապատասխանաբար 4.0 % և 5.0 %), *մսամթերք* ՝3.6 %, *թռչնամիս*՝ 11.6 %, *միրգ* ՝3.3 %, *բանջարեղեն* ՝8.2 % և այլն: Ըստ էության, գնաճի հարաբերական ցածր մակարդակը հիմնականում ապահովվել է ոչ պարենային ապրանքների և ծառայությունների գների հաշվին, որոնք նախորդ տարվա համեմատ նվազել են կամ քիչ են աճել: Սա նշանակում է, որ գների աճը հիմնականում սննդամթերքի ապրանքախմբում է, ինչն առավել ցավոտ է սոցիալապես խոցելի խմբերի համար, քանի որ նրանց ծախսերի մեջ սննդին ուղղվող ծախսերը շատ ավելի մեծ են: Ընդ որում, այդ խոցելիությունն առանձնապես սուր է արտահայտվում «ծախս-եկամուտ» հարաբերակցությունում, որտեղ ճեղքը կա՛մ ձգտում է զրոյի, կա՛մ երբեմն լինում է բացասական: Այս համատեքստում ուշագրավ է սպառողական գների ինդեքսում ապրանքների և ծառայությունների կառուցվածքի տեսակարար կշռի դիտարկումը: Ըստ այդմ, ապրանքների և ծառայությունների առավել խոշոր երեք խմբերի՝ պարենային ապրանքների, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների տեսակարար կշիռը կազմում է համապատասխանաբար՝ 45 %, 22 % և 32 %, և վերջին երեք տարիների կտրվածքով հիմնականում կրում է աճման միտում[8]:

Այստեղ ուշագրավ է սպառողական գների ինդեքսի կառուցվածքն ըստ ապրանքների և ծառայությունների ավելի մեծ բացվածքի (տե՛ս աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Ապրանքային (ծառայության) խմբերի կառուցվածքը ՀՀ սպառողական գների ինդեքսում 2015-2019 թթ.

(առաջին եռամսյակներ), %

Տեսակարար կշիռը ըստ տարիների (%)	Ըստ առանձին ապրանքային խմբերի								
	Սպառողական գների ինդեքս, ընդամենը	Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	ալկոհոլային խմիչք, ծխախոտ	Հագուստ, կոշիկ	Բնակարանային ծառայություն, էլեկտրաէներգիա, գազ և այլն	Առողջապահություն	Տրանսպորտ	Կրթություն	Ռեստորանային, հյուրանոցային ծառայություն
2015 թ.	100.0	44.2	4.9	4.1	16.1	7.1	7.2	0.4	4.4
2016 թ.	100.0	44.2	4.9	4.1	16.1	7.1	7.2	0.4	1.7
2017 թ.	100.0	41.1	4.4	4.4	16.5	9.5	6.8	0.8	1.3
2018 թ.	100.0	40.7	4.3	3.8	17.3	8.6	8.1	0.7	1.7
2019 թ.	100.0	41.3	4.5	4.1	16.0	7.8	8.3	1.3	1.7

Աղբյուրը՝ Վիճակագրական տեղեկագիր, Սպառողական գների ինդեքսը, 2019 թ., էջ 76-78:

Ինչպես երևում է աղյուսակից, վերջին հինգ տարվա կտրվածքով սպառողական գների ինդեքսում տեղի է ունեցել սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքների, ինչպես նաև ալկոհոլային խմիչքների և ծխա-

[8] Տե՛ս Վիճակագրական տեղեկագիր, Սպառողական գների ինդեքսը, 2019 թ., էջ 78-89:

խոտի տեսակարար կշռի կայուն նվազում՝ 4.9 %-ից մինչև 4.5 %, և հակառակը՝ աճել է առողջապահության, տրանսպորտի և կրթության տեսակարար կշիռը՝ համապատասխանաբար 7.1 %-ից 7.8 %, 7.2 %-ից 8.3 % և 0.4 %-ից 1.3 %: Բնակարանային ծառայությունները՝ էլեկտրաէներգիան, գազը և այլն, սպառողական գների ինդեքսում ունեն բավական մեծ տեսակարար կշիռ՝ շուրջ 16 %, և դիտարկվող ժամանակահատվածում պահպանում են կայունություն:

Գնաճային զարգացումների այս բնականոն և միաժամանակ խիստ հակասական պատկերը, մասնավորապես 2018 թ. 1.8 % և 2019 թ. առաջին եռամսյակի 1.5 % գնաճերը, ինչպես նաև դրանց արձանագրած նվազման միտումը, բավական մտահոգիչ են: Լա՞վ է դա, թե՞ վատ, նպաստո՞ւմ է դա սոցիալական վիճակի բարելավմանը, թե՞ ոչ: Այստեղ ոչ այնքան էական են գնաճի ցուցանիշները, որքան առաջին անհրաժեշտության ապրանքների իրական թանկացումները, որոնց հակադրելով գնանկում կամ ավելի դանդաղ աճ արձանագրած մյուս ապրանքատեսակները՝ ստացվում է շուրջ 450 ապրանք-ծառայությունների[9] ծավալագնային փոխազդեցությունների ագրեգացված ցուցանիշը՝ գնաճը:

Թե ինչքանով է թանկացել կյանքը Հայաստանում, որից մեծապես կախված է մարդկանց սոցիալական վիճակը, ավելի ակնառու արտահայտվում է պարենային և սպառողական զամբյուղների ուսումնասիրության ժամանակ:

Նվազագույն սպառողական զամբյուղը և պարենային զամբյուղը

Փաստորեն, գնաճն ավելի ակտիվ է առաջին անհրաժեշտության ապրանքների շրջանակում, ինչն էլ հենց թանկացնում է կենսական կարևոր սպառողական, մասնավորապես՝ պարենային զամբյուղը: Ուշագրավ է, որ ավելի շատ կենտրոնանալով գնաճի երևույթի վրա՝ քիչ ուշադրություն է դարձվում պարենային և սպառողական զամբյուղների թանկացման խնդրին: Մինչդեռ, գնաճ և սպառողական ու պարենային զամբյուղների համատեղ դիտարկումը միայն հնարավորություն կտա ճիշտ հասկանալու երկրի սոցիալական վիճակը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սկսած 2017 թ. երկրորդ եռամսյակից մինչև 2019 թ. առաջին եռամսյակը ներառյալ՝ սպառողական գների ինդեքսը, գտնվելով նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի միջին կամ վերին եզրային տիրույթում, մշտապես բարձր է եղել պարենային

[9] Ըստ սպառողական գների ինդեքսի (ՍԳԻ) հաշվարկման մեթոդաբանության՝ ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է 450 անվանում ապրանք–ծառայությունների հաշվով: Պարենային զամբյուղի մեջ մտնում են 11 անուն սննդային ապրանքախմբեր, որտեղ ներառված է մարդու օրգանիզմի համար անհրաժեշտ սննդի նվազագույն քանակը: Իսկ սպառողական զամբյուղը, բացի ուտելիքից, ներառում է նաև մարդուն անհրաժեշտ այլ ապրանքներ և ծառայություններ (հագուստ, կոմունալ ծառայություններ և այլն):

զամբյուղի արժեքից: Սա նշանակում է, որ եթե նույնիսկ նվազագույն սպառողական զամբյուղը մի կերպ հասանելի է եղել բնակչությանը, ապա պարենային ապրանքների զամբյուղը, դրանում ներառված կոնկրետ ապրանքների շատ բարձր գների պատճառով, հասանելի չի եղել: 2019 թ. առաջին եռամսյակում սպառողական գների ինդեքսը, նորից դուրս գալով պարենային զամբյուղի տիրույթից, հայտնվում է նվազագույն սպառողական զամբյուղի վերին եզրային տիրույթում, ընդ որում՝ ավելի բարձր, քան դիտարկվող ժամանակահատվածում ամենաբարձր մակարդակ արձանագրած՝ 2018 թ. առաջին եռամսյակում (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1

Պարենային և սպառողական զամբյուղների արժեքների, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքների և սպառողական գների ինդեքսների փոփոխությունը 2015-2019 թթ.

(ըստ եռամսյակների)



Աղբյուրը՝ 1.ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2015 թ., էջ 312, 229, 189, 247, 2016 թ., էջ 312, 232, 190, 243; 2017 թ., էջ 323, 285, 194, 249, 2018 թ., էջ 330, 269, 199, 254; 2019 թ. 1 եռամսյակ, էջ 369: 2.Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2018 թ., էջ 90, 95-96:

Դիտարկված պատկերն առանձնապես ցավոտ է բնակչության խոցելի, մի կերպ ծայրը ծայրին հասցնող խավի համար, որին հասանելի չէ նույնիսկ պարենային կենսական նվազագույնը: Իրավիճակն էլ ավելի կբարդանա, քանի որ դեռևս նկատվում են սպառողական ապրանքների գների աճման միտումներ, ինչի պայմաններում պարենային և սպառողական զամբյուղները նույնպես կդրսևորեն շարունակական թանկացման միտում (տե՛ս աղյուսակ 5):

Աղյուսակ 5

Պարենային սպառողական և նվազագույն սպառողական զամբյուղների արժեքների և սպառողական գների ինդեքսների փոփոխությունը 2017-2019 թթ.

(եռամսյակը եռամսյակի նկատմամբ)

Տարիներ, եռամսյակներ	Սպառողական գների ինդեքսը (%)	Պարենային զամբյուղի արժեքը՝ ամսական կտրվածքով		Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը՝ ամսական կտրվածքով	
		արժեք (դրամ)	աճի տեմպ (%)	արժեք (դրամ)	աճի տեմպ (%)
2017					
Մարտ	99.9	32 157.5	*93.1*	56 918.7	*93.1*
Հունիս	101.1	33 781.1	*105.1*	59 792.5	*105.1*
Սեպտեմբեր	101.0	31 407.8	*93.0*	55 591.9	*93.0*
Դեկտեմբեր	102.6	32 439.3	*103.3*	57 417.5	*103.3*
2018					
Մարտ	103.9	34 663.7	*106.9*	61 354.8	*106.9*
Հունիս	100.8	35 214.5	*101.6*	62 329.6	*101.6*
Սեպտեմբեր	100.6	33 930.8	*96.4*	60 057.5	*96.4*
Դեկտեմբեր	103.2	34 527.4	*101.8*	61 113.6	*101.8*
2019					
Մարտ	105.7	35 906.8	*104.0*	63 555.0	*104.0*

Աղբյուրը 1.ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, Հավելված՝Զավեշտալի վիճակագրություն, 2015 թ. 1,2,3,4 եռամսյակ, 2016 թ. 1,2,3,4 եռամսյակ, էջ 312, 232, 190, 243; 2017 թ. 1,2,3,4 եռամսյակ, էջ 323, 285, 194, 249, 2018 թ. 1,2,3,4 եռամսյակ, էջ 330, 269, 199, 254; 2019 թ. 1 եռամսյակ, էջ 369:
2.Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2018 թ., էջ 90, 95-96, Year Book-2018-kens.indd:

Ինչպես երևում է աղյուսակից, սպառողական գների ինդեքսների և պարենային սպառողական ու նվազագույն սպառողական զամբյուղների արժեքների փոփոխությունները կրում են աճի և/կամ նվազման միևնույն միտումները՝ իհարկե ոչ համաչափ տեմպերով: Սա էլ պայմանավորված է այս ցուցանիշների վրա տարաբնույթ գործոնների ոչ համաչափ ազդեցություններով:

2019 թվականի առաջին եռամսյակում պարենային զամբյուղի արժեքը միջին ընթացիկ գներով կազմել է 35 906.8 դրամ: Այսինքն՝ 1 շնչին միայն սնվելու համար անհրաժեշտ է նվազագույնն այդքան գումար: Իսկ սպառողական զամբյուղը նույն ժամանակահատվածում արժեցել է 63 555.0 դրամ: Պարենային ու սպառողական զամբյուղների արժեքները երբեք այսքան բարձր չեն եղել: Փաստորեն, 2019 թ. առաջին եռամսյակում, համեմատած 2018 թ. առաջին եռամսյակի հետ, պարենային զամբյուղի արժեքը ավելացել է 1243 դրամով, սպառողական զամբյուղինը՝ 2196 դրամով, և տարեկան կտրվածքով այն թանկացել է 1.73 %-ով: Այստեղ բացառվում է սեզոնայնության գործոնի դերը, ինչի

մասին են վկայում եռամսյակային համեմատությունները: Մի կարևոր հանգամանք ևս. ինչպես արդեն նշվել է վերևում, 2019 թ. առաջին եռամսյակում նկատելիորեն բարձրացել են պարենային զամբյուղի մեջ մտնող հիմնական սննդատեսակների (հաց, միս, միրգ-բանջարեղենի որոշ տեսակներ և այլն) գները, ինչը կարտացոլվի 2019 թ. երկրորդ եռամսյակի պարենային զամբյուղի արժեքի վրա: Սա նշանակում է, որ պարենային զամբյուղի արժեքն արդեն իսկ գերազանցում է 2019 թ. առաջին եռամսյակի պարենային զամբյուղի՝ 35 906. 8 դրամի շեմը:

Նյութը չծանրաբեռնելու նպատակով, չշարունակելով նույնաբովանդակ համեմատությունները, կարելի է ասել, որ պարենային զամբյուղի արժեքները, տարեկան կտրվածքով հիմնականում կրելով աճի միտում և դրսևորելով բավական բարձր ցուցանիշներ, տանում են շարունակական թանկացման: Եվ, բնականաբար, ծախսերը նույնպես մեծանում են, մանավանդ կենսական նվազագույնի համար կարևոր՝ առաջին անհրաժեշտության ապրանքների մասով:

Ուշագրավ է, որ թեև պարենային զամբյուղի հետևողական և մեծ աճի նման պայմաններում թանկացումը և ծախսերի մեծացումը բավականին լուրջ իրողություն են, սակայն դա այնքան չի քննարկվում, որքան գնաճային ցածր շեմը:

Արդյո՞ք համունչ են աճում եկամուտները: Այստեղ շատ կարևոր է դառնում «ծախս-եկամուտ» հարաբերակցության ուսումնասիրումը:

«Ծախս-եկամուտ» հարաբերակցությունը. միտումները և խնդիրները

Սպառողական գների և սպառողական ծախսերի շարունակական աճի պայմաններում կենսական նվազագույնի ապահովման թիրախային ցուցանիշ հանդիսացող նվազագույն աշխատավարձը և նվազագույն կենսաթոշակը, համաձայն վերջին տվյալների, կազմում են 55 000 դրամ և 25 500 դրամ: Բնականաբար, նվազագույն եկամուտների նման մակարդակի պայմաններում հնարավոր չէ հոգալ տարրական կենսական պահանջները, քանի որ նվազագույն սպառողական զամբյուղի և պարենային զամբյուղի գները 2019 թ. առաջին եռամսյակում արդեն իսկ կազմում են 63550 դրամ և 35 906.8 դրամ՝ համապատասխանաբար շարունակելով դրսևորել աճի միտումներ: Նման պայմաններում նվազագույն աշխատավարձը չի հաղթահարում նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը, իսկ նվազագույն կենսաթոշակը չի հաղթահարում նույնիսկ պարենային զամբյուղի արժեքը:

Այս համատեքստում խոսուն է 2017-2019 թթ. պարենային սպառողական զամբյուղի ու նվազագույն սպառողական զամբյուղի արժեքների և միջին անվանական աշխատավարձերի (եռամսյակը եռամսյակի նկատմամբ) փոփոխությունները (տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 2

Պարենային սպառողական զամբյուղի և նվազագույն սպառողական զամբյուղի արժեքների ու միջին անվանական աշխատավարձերի փոփոխությունները 2017-2019 թթ.

(ըստ եռամսյակների), %



Աղբյուրը՝ 1.ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, Հավելված՝ Ջավեշտալի վիճակագրություն, 2015 թ. 1,2,3,4 եռամսյակ, 2016 թ. 1,2,3,4 եռամսյակ, էջ 312, 232, 190, 243; 2017 թ. 1,2,3,4 եռամսյակ, էջ 323, 285, 194, 249, 2018 թ. 1,2,3,4 եռամսյակ, էջ 330, 269, 199, 254; 2019 թ. 1 եռամսյակ, էջ 369: 2.Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2018 թ., էջ 90, 95-96:

Համաձայն գծապատկերի՝ դիտարկվող ժամանակահատվածում պարենային և նվազագույն սպառողական զամբյուղների արժեքները դրսևորում են աճի միտում, մասնավորապես՝ պարենային զամբյուղի արժեքի աճի տեմպը, որոշակի տատանումներով, 2017 առաջին եռամսյակի 93.1 %-ից հասել է 104.0 %-ի 2019 թ. առաջին եռամսյակում: Իսկ միջին անվանական աշխատավարձը՝ ճիշտ հակառակը. նույն ժամանակահատվածում 106.4 %-ից իջել է 103.0 %-ի: Այս պատկերը փաստում է եկամուտների, մասնավորապես անվանական աշխատավարձի նկատմամբ սպառողական ծախսերի առաջանցիկ աճի մասին: Ասվածն առանձնապես ցայտուն է արտացոլվում պարենային զամբյուղի ծախսերի մասով՝ 2017 թ. 2-րդ եռամսյակում, 2017 թ. 4-րդ եռամսյակից մինչև 2018 թ. 2-րդ եռամսյակը, իսկ 2018 թ. 2-րդ եռամսյակից մինչև 2019 թ. 1-ին եռամսյակը ներառյալ միջին անվանական աշխատավարձի և նվազագույն սպառողական զամբյուղի արժեքների աճի տեմպերն ուղղակի զուգամիտվել են, ինչը նշանակում է, որ եկամուտները հազիվ բավարարել են նվազագույն սպառողական ծախսերի փոխհատուցմանը:

Ասվածն ավելի համոզիչ է դառնում միջին ամսական անվանական աշխատավարձի և սպառողական գների ինդեքսների հարաբերակցության շրջանակներում (տե՛ս գծապատկեր 3):

Գծապատկեր 3

Միջին ամսական անվանական աշխատավարձի և սպառողական գների ինդեքսների փոփոխությունը 2013-2019 թթ.

(նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ), %



Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2018 թ., էջ 90, 95-96:

Գծապատկերից երևում է, որ եթե մինչև 2018 թ. միջին ամսական անվանական աշխատավարձի և սպառողական գների ինդեքսները ոչ էական շեղումներով դրսևորում են նույնանման միտումներ, ապա սկսած 2018 թ.-ից՝ ծախսերը սկսում են գերազանցել եկամուտները, և նրանց միջև առաջացած զգալի բացասական ճեղքը պահպանվում է ամբողջ 2018 թ. ընթացքում: Բացասական ճեղքը թեև նվազել է, բայց պահպանվում է նաև 2019 թ. առաջին եռամսյակում, ինչը, իհարկե, կփոխվի տարվա կտրվածքով:

Կատարված դիտարկումները բացատրվում են ոչ միայն սպառողական գների ինդեքսի և դրանով պայմանավորված ծախսերի աճով, այլ նաև այն փաստով, որ միջին աշխատավարձը, որը բնակչության սոցիալական վիճակի հիմնական բնութագրիչներից է, և իրական աշխատավարձը, որն արտահայտում է անվանական աշխատավարձի գնողունակությունը, վերջին հինգ տարում էական փոփոխություն չեն կրել, ինչի մասին են վկայում նաև դրանց աճի տեմպերը, որոնք հիմնականում կրում են նվազման միտումներ (տե՛ս աղյուսակ 6):

Աշխատավարձերի ու կենսաթոշակների բարձրացումներ չեն նախատեսվում նաև 2019 թ. բյուջեով: Ավելին, մոտ ապագայում չեն նշմարվում նաև դրանց բարձրացման նախադրյալներ, մանավանդ որ, ինչպես Համաշխարհային բանկը (ՀԲ), այնպես էլ Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) այս տարի Հայաստանում կանխատեսում են տնտեսական աճի դանդաղում: Մասնավորապես, ՀԲ-ն կանխատեսում է համախառն ներքին արդյունքի 4.3 %, իսկ ԱՄՀ-ն՝ 4.5 % ավելացում,

ինչը բավական ցածր է նախորդ երկու տարիների ցուցանիշներից (2017 թ.՝ 7.5 %, 2018 թ.՝ 5.2 %)։ Ավելին, ըստ նրանց՝ տնտեսական աճի դանդաղումը կարող է շարունակվել մոտակա երկու տարիներին[10]:

Աղյուսակ 6

Միջին ամսական անվանական աշխատավարձը և իրական աշխատվարձը

Տարիներ	Անվանական աշխատավարձ (դրամ)	Անվանական աշխատավարձ՝ նախորդ տարվա նկատմամբ, %	Իրական աշխատավարձի ինդեքս, %
2015	171 615	108.2	104.4
2016	174 445	101.6	103.0
2017	177 817	101.9	100.9
2018	172 481	97	101.5
2019 /1 եռամս./	174 065	101	100

Աղբյուրը՝ 1.Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2018 թ., էջ 90:
2.ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2018 թ., մակրոտնտեսական ցուցանիշներ:

Ամփոփելով սպառողական գների ու սպառողական ծախսերի, նվազագույն սպառողական զամբյուղի և պարենային զամբյուղի, եկամուտների, մասնավորապես միջին ամսական աշխատավարձի վերաբերյալ վիճակագրական տվյալների վերլուծությունը, վեր հանելով դրանց փոխազդեցությունները և այդ համատեքստում դրսևորած միտումներն ու խնդիրները, կարելի է ասել, որ բնակչության սոցիալական վիճակի բարելավման և կենսամակարդակի բարձրացման խնդիրը պետք է դիտարկել որպես ուղղակի և հետադարձ բազմագործոն ազդեցությունների *անընդհատ գործընթաց*, իսկ դրա լուծումը պետք է փնտրել *«գին-ծախս-եկամուտ»* փոխազդեցությունների համատեքստում:

Բանալի բառեր - *գնաճ, սպառողական գներ, ծախս, սպառողական զամբյուղ, պարենային զամբյուղ, եկամուտ, կենսամակարդակ*

АМАЛИЯ САРИБЕКЯН – ***Связь «Потребительские цены – расходы – доходы»: её проявления и развитие в РА.*** – Последнее время в Армении интенсивно обсуждаются социально-экономическое состояние, уровень жизни и доходы населения, а также потребительские цены. По данным ЦБ страны, в минувшем году 12-месячная инфляция, колеблясь вокруг среднего уровня 2,5 %, в декабре составила 1,85 %. Как отмечает Центральный банк, «инфляция в 2018 г. ниже прогнозируемого, однако говорить, что год прошёл без роста цен неправильно». Здесь важен не факт низкой инфляции, а реальное повышение цен на товары первой необходимости, что приводит к росту стоимости потребительской корзины. Примечательно, что минимальная зарплата не покрывает стоимость минимальной

[10] Տե՛ս 1.Global Economic Prospects, WB Group, Flagship Report, January 2019, էջ 75, նաև՝ Համաշխարհային բանկը զգուշացնում է. ի՞նչը կարող է Հայաստանում նոր ցնցումների պատճառ դառնալ, 168.am, 24.03.2019:

потребительской корзины, а минимальная пенсионная выплата ниже стоимости продовольственной корзины. Таким образом, улучшение социально атмосферы следует искать в многофакторном воздействии цепочки «цена – расход – доход».

Ключевые слова: *инфляция, потребительские цены, расходы, потребительская корзина, продовольственная корзина, доходы, уровень жизни*

AMALYA SARIBEKYAN – *"Consumer Prices-Expenditure-Income" Connection: its Manifistations and Development in RA.* – The issues concerning the socio-economic condition of the country, its living standards, income and consumer prices of the population have recently been intensively discussed in Armenia. According to the official data of the Central Bank of Armenia, 12-month inflation, fluctuating around the average level of 2.5 % in 2018, made up 1.85 % in December. As the CBA points out, "Inflation in 2018 is lower than it was anticipated; however, it is definitely erroneous to say that a year lacks boost in prices." The most important point here is not the fact of low inflation, but the real increase in the prices of goods of first priority, that leads to an increase in the cost of the consumer basket. Thus, it is noteworthy to say that while focusing more attention on the phenomenon of inflation, very little attention is paid to the issue of increasing the cost of food and consumer baskets.

Under these conditions, the minimum salary does not overpower the cost of the minimum consumer basket, and the minimum pension payment cannot overpower even the cost of the food basket. Thus, the improvement of the social condition of the population must be sought in the context of the direct and inverse multi-factorial effects of the price-expenditure-income chain.

Key words: *inflation, consumer prices, expenditures, consumer basket, food basket, income, living conditions*

Ներկայացվել է՝ 21.05.2019
Գրախոսվել է՝ 20.06.2019
Ընդունվել է տպագրության՝ 22.07.2019